ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՇՏԱՐԱԿԻ Պ. ՊՈՌՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

10.07.2023թ.

«Զաքարյան շին» ՍՊԸ և «Արտշին-1» ՍՊԸ կոնսորցիում

«Զաքարյան շին» ՍՊԸ գործադիր տնօրեն Ս. Զաքարյանին

Ծ Ա Ն Ու Ց Ու Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Արագածոտնի մարզի «Աշտարակի Պ. Պռոշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Զաքարյան շին» ՍՊԸ և «Արտշին-1» ՍՊԸ կոնսորցիումի միջև «06» դեկտեմբերի 2022թ. Կնքված պայմանագրին կից համաձայնագրով (կնքված 24.01.2023թ-ին.) N ՀՀԱՄ-ԱՇՏԱՐԱԿ-3-ՀԴ-ԳՀԱՇՁԲ -22/01 պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի կատարման վերջնաժամկետն է ս/թ. փետրվարի 24-ը:

Սակայն պայմանագրով սահմանված ժամկետում ստանձնած պարտավորությունները չեն կատարվել «Զաքարյան շին» ՍՊԸ և «Արտշին-1» ՍՊԸ կոնսորցիումի կողմից:

Հիմք ընդունելով վերոգրյալը և Պայմանագրի 8.11 կետը՝ Արագածոտնի մարզի «Աշտարակի Պ. Պռոշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը միակողմանի լուծում է Արագածոտնի մարզի «Աշտարակի Պ. Պռոշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Զաքարյան շին» ՍՊԸ և «Արտշին-1» ՍՊԸ կոնսորցիումի միջև «06» դեկտեմբերի 2022թ. կնքված N ՀՀԱՄ-ԱՇՏԱՐԱԿ-3-ՀԴ-ԳՀԱՇՁԲ -22/01 պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը պատվիրատուի կողմից պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը

մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

-սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

-Այսպիսով, «Զաքարյան շին» ՍՊԸ և «Արտշին-1» ՍՊԸ կոնսորցիումին տրվում է 10 /տասը/ օրացույցային օր՝ տուժանքներով սահմանված որակավորման՝ 362514 /երեք հարյուր վաթսուներկու հազար հինգ հարյուր տասնչորս/ դրամ և պայմանագրի 241676 /երկու հարյուր քառասունմեկ հազար վեց հարյուր յոթանասունվեց/ դրամ ապահովումների գումարները Արագածոտնի մարզի «Աշտարակի Պ. Պռոշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի Կենտրոնական գանձապետարանի Հ/Հ 900448000282 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

-Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն, «Զաքարյան շին» ՍՊԸ և «Արտշին-1» ՍՊԸ կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազորված մարմին, իսկ Կապալառուի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, կներկայացվեն Կապալառուի բանկ՝ նշված գումարները գանձելու նպատակով:

ՏՆՕՐԵՆ՝ Կ. ԱԼՄԱՍՅԱՆ